ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 50-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ 30-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-033-0294-0063 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,12 ՀԵԿՏԱՐ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՊԱՐՍԱՄ ԳԱՌՆԻԿԻ ՊԵՏՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,<<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>>ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ կետերով, <<Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների, այգետնակների (ամառանոցների) և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարարական ու արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական ու արտադրական նշանակության շինությունների տեղադրության(տարածագնահատման գոտիականության) գործակիցները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշումով,հիմք ընդունելով համայնքի ղեկավարին հասցեագրված հողամասի սեփականատեր՝ Պարսամ Գառնիկի Պետոյանի դիմումը՝ Երանոս համայնքի 30-րդ փողոցի թիվ 5 հասցեում գտնվող հողամասի վրա իր կողմից ինքնակամ կառուցված մեկ հարկանի անասնաշենքի,անասնաշենքի ձեղնահարկի կառույցների օրինականացման մասին,

Որոշում եմ՝

1.Հաշվի առնելով,որ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա,ընդունել ի գիտություն,որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու

առողջությանը,

2)նկատի ունենալով,որ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտի պահանջելու իրավունք,ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի 30-րդ փողոցի թիվ 5 հասցեում սեփականության իրավունքով (սեփականության իրավունքի վկայական N29012019-05-0014) քաղաքացի Պարսամ Գառնիկի Պետոյանին (ծնված՝17.08.1990թ., նույնականացման քարտ՝003913969,տրված՝17.04.2015թ.,043-ի կողմից) պատկանող 05-033-0294-0063 կադաստրային ծածկագրով 0,12 հեկտար հողամասում, 2019 թվականին ինքնակամ կառուցած մեկ հարկանի անասնաշենքը՝արտաքին չափերը՝120,00 քառակուսի մետր(ներքին չափերը՝101,70 քառակուսի մետր),անասնաշենքի ձեղնահարկը՝արտաքին և ներքին չափերը՝105,43 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով կառույցը ճանաչել օրինական:

2. Սահմանել,որ կառույցն իրականացրած ֆիզիկական անձ Պարսամ Գառնիկի Պետոյանը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երանոս համայնքի բյուջեի N 900145102217 հաշվին պետք է վճարի<<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ սահմանված հաշվարկված 93328 (իննսուներեք հազար երեք հարյուր քսանութ) ՀՀ դրամ օրինականացման վճարը, որից՝

անասնաշենք ինքնակամ կառույցի օրինականացման համար (120,00x6000x0,069=49680)

անասնաշենքի ձեղնահարկի ինքնակամ կառույցի օրինականացման համար (105,43x6000x0.069=43648)

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Մելիք Քարամյանի վրա:

16.10.2019

X

VERIFIED OCSP 16.10.2019 12:36:31 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ

Подписано: BAVEYAN SASHA 1902730216

2019թ.հոկտեմբերի 14
գ.Երանոս